ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

409

13 հոկտեմբերի 2022 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման» ծրագրի 2-րդ կետով, համաձայն «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի պաշտոնակատարի 2022թ. հոկտեմբերի 10-ի N 20/1354 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի հոկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում անցկացնել շտաբային ուսումնավարժություն « Երկրաշարժի դեպքում փրկարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը » թեմայով:

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.
3) ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:
4) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 4 հավելվածի:
5) ուսումնավարժության մտահղացման բացատրագիրը՝ համաձայն N 5 հավելվածի:
6) ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 6 հավելվածի:
7) ուսումնավարժության իրավիճակի զարգացման պլանը՝ համաձայն N 7 հավելվածի:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը.

2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարահանման հանձնաժողովը.

3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայություններին՝

ա. մարզային ՔՊ կապի և ազդարարման ծառայություն .

բ. մարզային ՔՊ առևտրի և սննդի ապահովման ծառայություն .

գ. մարզային ՔՊ հասարակական կարգի պահպանման ծառայություն.

դ. մարզային ՔՊ կենդանիների և բույսերի պաշտպանության ծառայություն.

ե. մարզային ՔՊ տրանսպորտի ծառայություն.

զ. մարզային ՔՊ կոմունալ-տեխնիկական ծառայություն.

է. մարզային ՔՊ ինժեներական ծառայություն.

ը. մարզային ՔՊ նյութատեխնիկական մատակարարման ծառայություն.

թ. մարզային ՔՊ էներգետիկայի ծառայություն .

ժ. մարզային ՔՊ բժշկական ծառայություն :

4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքը.

5) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի ՄՓՎ) :

4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, մարզային տարահանման հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանին՝ ստուգել ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության տարահանման մարզային հանձնաժողովի աշխատանքը :

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի ՄՓՎ պետի պաշտոնակատար փ/ծ փոխգնդապետ Ռոմա Սահակյանին՝

1) ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի մշակումը՝ համաձայն շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի և ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն .

3) ապահովել ուսումնավարժության անցկացման ընթացքում համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ .

4) Սիսիան քաղաքային համայնքի ղեկավարի հետ ուսումնասիրել հավանական իրավիճակը, բնակչության պաշտպանության ու կենսաապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգը.

5) ճշգրտել «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան » -ը.

6) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2022 թվականի հոկտեմբերի 19-ին:

6. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարին ՝

1) ճշտել ուժեղ երկրաշարժի դեպքում համայնքի ուժերի և կազմավորումների թվաքանակը.

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան փոխգործողությունների պլանները.

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին .

8. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին :

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանին ՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը :

14.10.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 13
ք. Կապան

Հավելված N 1
Սյունիքի մարզպետի
2022թ հոկտեմբերի 10-ի
N -Ա որոշման
409

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄ

Հ/հ	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը
1.	Սահակյան Ռոմա Յուրիկի	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի պաշտոնակատար , փ/ծ փոխգնդապետ
2.	Հարությունյան Հայկ Սաշայի	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ, մարզի ԱԻ հանձնաժողովի նախագահի տեղակալ
3.	Ավետիսյան Սեյրան Ռազմիկի	Մարզի տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալ , Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

10/14/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ հոկտեմբերի 13-ի
N -Ա որոշման
409

ԿԱԶՄ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԱՅԻՆ

Հ/հ	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը
1.	Օվչյան Վիլեն Սերժիկի	Սյունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ փոխ/գ-տ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի ղեկավար
2.	Վարդանյան Մամիկոն Մարատի	Սյունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, փ/ծ ավագ լ-նտ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ
3.	Արզումանյան Սիրուշ Յուրիկի	Սյունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ
4.	Շահնազարյան Արտյոմ Իգնատի	Սյունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ կ-ն, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ
5.	Ասատրյան Դավիթ Սուրենի	Սյունիքի ՄՓՎ Կապանի ՀՓՋ-ի հրամանատար, փ/ծ փոխ/գ-տ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ
6.	Հովսեփյան Գարիկ Սերյոժայի	Սյունիքի ՄՓՎ Սիսիանի ՀՓՋ-ի հրամանատար, փ/ծ փոխ/գ-տ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ

10/14/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ հոկտեմբերի 13-ի
N -Ա որոշման
409

ԿԱԶՄ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԱՌՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԸ

Հ/հ	Ռիսումնավարժությանն ընդգրկված մասնակիցները	Միջնորդները	
		Պաշտոնը, կոչումը	Ազգանուն, Անուն
1.	ՀՀ Սյունիքի մարզպետարան, Սյունիքի մարզի ԱԻ հանձնաժողով. Սյունիքի մարզի տարահանման հանձնաժողով. Սիսիան համայնք	Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ փ/ծ փոխ/գ-տ	Օվչյան Վիլեն
2.	մարզային ՔՊ հասարակական կարգի պահպանման ծառայություն. մարզային ՔՊ նյութատեխնիկական մատակարարման ծառայություն. մարզային ՔՊ կոմունալ-տեխնիկական ծառայություն.	Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ փ/ծ մայոր	Պողոսյան Մարատ
3.	մարզային ՔՊ բժշկական ծառայություն, մարզային ՔՊ առևտրի և սննդի ապահովման ծառայություն . մարզային ՔՊ ինժեներական ծառայություն.	Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ փ/ծ մ-ր Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ մասնագետներ	Մինասյան Աննա Թադևոսյան Լամարա Հայրապետյան Համեստ
4.	մարզային ՔՊ կապի և ազդարարման ծառայություն. մարզային ՔՊ տրանսպորտի ծառայություն. մարզային ՔՊ կենդանիների և բույսերի պաշտպանության ծառայություն. մարզային ՔՊ էներգետիկայի ծառայություն .	Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ պետ փ/ծ ավագ լ-նտ Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ փ/ծ մայոր	Վարդանյան Մամիկոն Արզումանյան Սիրուշ

10/14/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано. MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Է.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ հոկտեմբերի 13-ի
N -Ա որոշման
409

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԻ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
	Փաստաթղթերի մշակում			
1.	Ելակետային տվյալների որոշում՝ մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև հոկտեմբերի 17	Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբ	
2.	Կազմակերպման և անցկացման վերաբերյալ ուսումնվարժության ղեկավարի որոշման նախագծի մշակում	Մինչև հոկտեմբերի 14	Ղեկավարման շտաբ	
3.	Նախապատրաստման օրացուցային պլանի մշակում և հաստատման ներկայացում	Մինչև հոկտեմբերի 17	Ղեկավարման շտաբ	
4.	Մտահղացման բացատրագրի մշակում	Մինչև հոկտեմբերի 17	Ղեկավարման շտաբ	
5.	ՇՈՒ անցկացման պլանի մշակում	Մինչև հոկտեմբերի 18	Ղեկավարման շտաբ	
6.	Իրավիճակի զարգացման պլանի ներկայացում	Մինչև հոկտեմբերի 18	Ղեկավարման շտաբ	
	2. Ղեկավարման և միջնորդական կազմի նախապատրաստում			
7.	ՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում	Մինչև հոկտեմբերի 19	Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբ	
8.	Միջնորդների անհատական պլանների մշակում և հաստատման ներկայացում	Մինչև հոկտեմբերի 19	Ղեկավարման շտաբ	
	3. ՈՒսուցանվողների նախապատրաստում			
9.	ՔՊ բնագավառին առնչվող իրավական ակտերի ուսումնասիրում	Մինչև հոկտեմբերի 20	Ղեկավարման շտաբ	
10.	ՇՈՒ նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում	Մինչև հոկտեմբերի 20	Ղեկավարման շտաբ	

10/14/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Է.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ հոկտեմբերի 13-ի
N -Ա որոշման
409

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՌԱՋԱՐԿԵԼԻՔ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՈՂՈՒԹՅԱՆ

Թեման՝ «Երկրաշարժի դեպքում փրկարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը » :

Ուսումնավարժության նպատակները՝

ա) Կատարելագործել ղեկավար կազմի հմտություններն ու ունակություններն ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում:

բ) Ստուգել « Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան»-ի իրատեսությունը:

գ) Կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների և արձագանքող ուժերի միջև:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝

Սյունիքի մարզպետարան, ԱԻ մշտական գործող հանձնաժողով, տարահանման հանձնաժողով, մարզային ծառայություններ:

Անցկացման ժամանակը՝

2022թ. Հոկտեմբերի 21-ին ժամը 08:05 - 17:00 :

Անցկացման վայրը՝

ՀՀ Սյունիքի մարզպետարան , Կապան քաղաք Գ. Նժդեհ 1 :

Ելակետային տվյալները՝

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Ադրբեջանին: Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան (3 905 մ) հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանից գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

ՀՀ Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով ՀՀ ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ: Մարզի տարածքով է

անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ.-ին շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

Մարզի տարածքն աչքի է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով: Մարզի տարածքն ամբողջությամբ սեյսմավտանգ է, գտնվում է 4-6 բալ ուժգնությամբ սեյսմիկ գոտում և պարբերաբար ենթարկվում է երկրաշարժերի ազդեցությանը:

Մարզի քաղաքներից է Սիսիան քաղաքային համայնքը: Սիսիան քաղաքի մշտական բնակչությունը կազմում է 15.635 մարդ: Գտնվում է Երևանից մոտ 217 կմ հեռավորության վրա, Երևան-ԼՂՀ, Երևան-Իրան ավտոմայրուղուց 6-7 կմ հարավ, Որոտան գետի երկու ափերին, ծովի մակարդակից 1600 մ բարձրության վրա: Սիսիանի տարածաշրջանը, քաղաքի հետ միասին, ունի 1719 կմ² մակերես: Ունի լեռնային մակերևույթ, մինչև 3552 մ (Իշխանասար) բարձրություն: Տարածքում են գտնվում Զանգեզուրի լեռնաշղթայի կենտրոնական և Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի արևմտյան մասերը: Կան մոլիբդենի , պղնձի, շինանյութերի, դիատոմիտի հանքավայրեր, հանքային ջրեր : Տարածված են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Ունի չափավոր ցամաքային կլիմա: Հունվարի միջին ջերմաստիճանը -3°C-ից մինչև -12°C է, հուլիսինը՝ 10-18°C, տարեկան տեղումները՝ 400-800 մմ, վեգետացիայի շրջանը՝ 20-160 օր: Տարածքով հոսում է Որոտանը ՝ ԱրագլիջուրՇաղաթ, Սիսիան, Այրի, Շաքի, Լորաձոր վտակներով: Գործումեն Շամբի, Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանները, Տոլորսի, Շամբի, Անգեղակոթի և Սպանդարյանի ջրամբարները, Սիսիանի ջրանցքը :Տարածքը հատվում է բազմաթիվ սեյսմաակտիվ բեկվածքներով, որոնց համադրվում են տարբեր ուժգնության երկրաշարժերի օջախները:

Ստեղծված իրավիճակը՝

2022թ. Հոկտեմբերի 21-ին ժամը 07^{55}-ին Սյունիքի մարզի տարածքում, Սիսիան քաղաքից 25 կմ հյուսիս-արևելք, 10 կմ խորության վրա տեղի է ունեցել 5,5 մագնիտուդով (ըստ Ռիխտերի) երկարաշարժ: Սիսիանում և հարակից համայնքներում ինտենսիվությունը ըստ MSK-64 սանդղակի կազմել է 6-7 բալ: Նախնական տվյալներով Սիսիան քաղաքում կան շենք-շինությունների ավերածություններ, ստեղծվել է ծանր ինժեներական, բժշկական և հրդեհային իրավիճակ: Քաղաքը զրկվել է էներգոմատակարարումից և գազամատակարարումից: Վնասվել և երթևեկության համար դարձել է ոչ պիտանի Որոտան գետի վրա կառուցված կենտրոնական կամուրջը: Չի գործում բջջային կապը, հաղորդակցման ուղիները և կոմունիկացիոն համակարգերը: Հզոր ցնցումներից վնասվել է Սպանդարյան ջրամբարի պատվարը, որի վրա առաջացել է ճեղքվածք՝ 5մ լայնությամբ և 11մ երկարությամբ, ինչի հետևանքով ջուրը դուրս է հոսում մեծ քանակությամբ : Պատվարի փլուզման դեպքում Որոտան գետի ջրի մակարդակը կտրուկ կարող է բարձրանալ, ինչի հետևանքով ջուրը կարող է լցվել քաղաքի ցածրադիր թաղամասերը և քաղաքի մի մասը կհայտնվի ջրածածկման գոտում : Առավել վտանգավոր իրավիճակում կարող են հայտնվել Սիսիան քաղաքը, ՈՒյծ, Բալաք, Շաղատ, Շամբ և Որոտան համայնքները , որտեղ ջուրը վնաս կհասցնի բնակելի տներին, ցանքատարածքներին և այգիներին, որը կհանգեցնի մարդկային կորուստների և խոշոր նյութական վնասի :

I <u>ՓՈՒԼ</u> - « Սիսիան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում իրավիճակի գնահատում » :

Փուլի տևողությունը -աստղաբաշխական ժամանակով՝ժ.08:00-ից---12:00-ը 21.10.2022թ
- օպերատիվ ժամանակով՝ ժ. 08:00-ից -14:00-ը 21.10.2022թ.

Մասնակի իրավիճակը.

Սիսիան քաղաքում փլուզվել են շենք շինություններ, բնակչության շրջանում կան զոհեր, վիրավորներ և անհայտ կորածներ: ՈՒժեղ երկրաշարժի հետևանքով փլվել և վնասվել են Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Զ. Անդրանիկի թաղամասերը
/ բնակիչների թիվը 1655 / : Ստեղծվել է բարդ սանիտարական իրավիճակ, կան խցանված ճանապարհներ, առկա են հրդեհների օջախներ, մասնակի շարքից դուրս են եկել կոմունալ-էներգետիկ, կապի և հեռահաղորդակցության ցանցերը: Բնակչությունը փորձում է ձեռքի տակ եղած գործիքներով փլատակների տակից դուրս բերել հարազատներին: Երկրաշարժի հետցնցումների հետևանքով հնարավոր են նոր ավերածություններ և փլուզումներ: Բնակչության մոտ սկսվել է խուճապ :

Ուսումնական խարդեր՝

1. Ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում:
2. <<ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան>>-ը գործողության մեջ դնելը: Հետախուզության իրականացում :

ՈՒսուցանվողների գործողությունները՝

ՈՒսումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան, ներկայանում են Սյունիքի մարզպետարանի վարչական շենք << Սյունիքի մարզպետի մոտ խորհրդակցության: Սյունիքի ՄՓՎ պետը մարզպետին ներկայացնում է ստեղծված իրավիճակը և զեկուցում խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին: Պարզաբանում են ստեղծված իրավիճակը և յուրաքանչյուրի խնդիրներն ու անելիքները:Գործողության մեջ է դրվում << ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան>>-ը: Թաղամասերից ճշտվում և ճշգրտվում են ավերված և վնասված շենքերի ավերածության աստիճանները, փլատակների տակ մնացած բնակիչների հավանական թիվը և տեղը, արձագանքող ուժերի կազմը, Սյունիքի ՄՓՎ փրկարարական ուժերի կազմը, վիճակը և փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով մարզի վթարավերականգնողական ուժերի և բնակչության ներգրավվման անհրաժեշտությունը, վտանգավոր գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները, աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները: ՈՒժեղացվում են հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների հսկողությունը, համակարգում են բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը: Մշակվում և ներկայացվում են որոշումների նախագծեր, որոնց իրագործումը հնարավորություն է տալիս անհապաղ կազմակերպել վտանգավոր գոտուց բնակչության տարահանման կազմակերպումը, քաղաքացիներին պատկանող նյութական արժեքների գույքի պաշտպանությունը և պահպանությունը: Նշվում են ներգրավված ուժերի համագործակցության կարգը, պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը: Իրականացնում են հետախուզություն՝ իրական վիճակը գնահատելու և անհրաժեշտ փրկարարական և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար: Որոշում են Սիսիան քաղաքի վտանգավոր թաղամասերից բնակչության տարահանման երթուղիները և վայրը: Տարվում են բացատրական աշխատանքներ բնակչության շրջանում խուճապը կանխելու համար:

II <u>ՓՈՒԼ</u> << Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում և որոնողափրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում >> :

Փուլի տևողությունը- աստղաբաշխական ժամանակով – ժ.13:00-ից-17:00-ը 21.10.2022թ
օպերատիվ ժամանակով – ժ.11:00-ից 21.10.2022թ
մինչև փրկարարական աշխատանքների ավարտ

Մասնակի իրավիճակը.

Երկրաշարժի հետևանքով ամբողջովին փլվել են Ֆիզկուլտուրնիկներ N 2 , N 6, Որոտան N3 , N5 և Զ. Անդրանիկի N 1 , N 5 շենքերը, որտեղ բնակվում է 1010 մարդ : Ըստ նախնական տվյալների փլատակների տակ մնացել են 151 մարդ, որոնց մեջ կան երեխաներ, ծերեր, կանայք և հաշմանդամներ, իսկ 415 մարդ ստացել են բազմաթիվ կոտրվածքներ և վնասվածքներ, որոնց անհրաժեշտ է ցուցաբերել առաջին օգնություն: Հզոր ցնցումներից փլվել է կենտրոնական կամուրջը, ինչի հետևանքով խափանվել է երթևեկությունը քաղաքի տվյալ հատվածում: Կամրջի երկաթբետոնյա կոնստրուկցիաների մնացորդները խանգարում են Որոտան գետի ազատ հոսքը, ինչի հետևանքով ջրի մակարդակը սկսել է բարձրանալ: Ճանապարհներին առաջացել են բազմաթիվ բեռնատար և մարդատար ավտոմեքենաների խցանումներ: Ջրամբարի պատվարի ճեղքվածքը հետցնցման հետևանքով կարող է մեծանալ, ինչի հետևանքով ջրածածկման վտանգ է սպառնում Սիսիան քաղաքին, Բալաք, Շաղատ, Շամբ, Որոտան և ՈՒյծ համայնքներին :

Սիսիան քաղաքում ձևավորվել են աշխատանքային տեղամասեր, որտեղ իրականացվում են որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ, աշխատանքներին ներգրավված են Սյունիքի ՄՓՎ ուժերը, մարզի առաջին կանչի ուժերը և բնակիչներից ձևավորված

աշխատանքային խմբերը: Կենսապահովման նպատակով ստեղծվել են ջրի, սննդի, առաջին անհրաժեշտության իրերի բաշխման կետեր :

Ուսումնական հարցերը՝

1. Բնակչության տարահանման կազմակերպում:
2. Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Զ. Անդրանիկի թաղամասերում :
3. Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում:

ՈՒսուցանվողների գործողությունները.

Մշակում են ՀՀ Սյունիքի մարզպետի որոշման նախագիծ՝ վնասված շենքերից բնակչության տարահանման մասին : Որոշում են կազմակերպել Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Զ. Անդրանիկի թաղամասերի փլուզված շենքերից բնակչության տարահանումը առավել անվտանգ տարածք: Մարզի ԱԻ և տարահանման հանձնաժողովները իրականացնում են համապատասխան պլաններով նախատեսված տարահանման ենթակա և տարահանվող բնակչության ընդունման հավաքակայանների ծավալումը, ճշգրտում տարահանման ենթակա բնակչության խնդիրներն , հաշվարկները և երթուղիները: Որոշում են տարահանված բնակչությանը տեղավորել Սիսիանի թիվ 1 և թիվ 2 հիմնական դպրոցներում, ապահովել վերջիններիս առաջին անհրաժեշտության պարագաներով և ստեղծել նորմալ կենցաղային պայմաններ տարահանված բնակչության ժամանակավոր բնակության համար:

Առաջարկություններ են ներկայացնում Ֆիզկուլտուրնիկներ N 2 , N 6, Որոտան N3 , N5 և Զ. Անդրանիկի N 1 , N 5 շենքերում որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ :

Կազմակերպում են արձագանքող ուժերի փոխհամագործակցությունը : Ճշտում են ուժերը և խմբավորումները, ինչպես նաև որոշում են տեղադրել ոստիկանական հսկիչ կետեր և զգուշացնող ազդանշաններ, կարգավորել խցանված մեքենաների երթևեկությունը, սահմանափակել քաղաքացիների տեղաշարժը վտանգավոր գոտում, աղետի գոտի թույլատրել մուտք գործել միայն հատուկ անցագրերով մեքենաներին՝ չխանգարելու փրկարարների ու հատուկ ինժեներական տեխնիկայի աշխատանքները: Առաջարկություններ են ներկայացնում համապատասխան ուժերի ներգրավվմամբ և մասնակցությամբ / <<Հիդրո >> ՍՊԸ, <<Նոր բակ նորոգշին>> ԲԲԸ / իրականացնել ինժեներական և վթարավերականգնողական աշխատանքներ, ինժեներական տեխնիկայի օգնությամբ հեռացնել փլված կամրջի երկաթբետոնյա կոնստրուկցիաների մնացորդները, մաքրել գետի հունը տվյալ հատվածում՝ ապահովելով ջրի ազատ ընթացքը և սկսել կամրջի վերանորոգման աշխատանքները : Սպանդարյան ջրամբարի պատվարի վթարը վերացնելու նպատակով որոշում են ջուրը ջրամբարից բաց թողնել վթարային կարգավորիչ պահեստային ելքով, լայնացնել գետի հունը ՈՒյծ համայնքի տարածքում, որը հանդիսանում է կիրճի ամենանեղ հատվածը՝ ջրի ազատ ընթացքը ապահովելու նպատակով :

Ժամը 18 : 00-ին հայտարարվում է ուսումնավարժության ավարտ:

10/14/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Է.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հավելված N 6
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ հոկտեմբերի 13-ի
N -Ա որոշման
409

ՊԼԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Թեմա՝

« Երկրաշարժի դեպքում փրկարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը » :

Ուսումնավարժության նպատակները՝

1) Կատարելագործել ղեկավար կազմի հմտություններն ու ունակություններն ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում:

2) Ստուգել «ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան»-ի իրատեսությունը:

3) Կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների և արձագանքող ուժերի միջև:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝ Սյունիքի մարզպետարան, ԱԻ մշտական գործող հանձնաժողով, տարահանման հանձնաժողով, մարզային ծառայություններ:

Անցկացման ժամանակը՝
2022թ. հոկտեմբերի 21-ին ժամը 08:05 - 18:00 :

Անցկացման վայրը՝

ՀՀ Սյունիքի մարզպետարան , Կապան քաղաք Գ. Նժդեհ 1 :

ժամը		ՈՒսումնական հարցերը	Իրավիճակը /միջանկյալների բովանդակությունը/	ՈՒսուցանվողների գործողությունները	ՈՒսումնավարժության ղեկավարի գործողությունները	Միջնորդների գործողությունները
Օպ.	Աստղ.					
1	2	3	4	5	6	7
I ՓՈՒԼ - « Սիսիան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում իրավիճակի գնահատում » : **Փուլի տևողությունը** -աստղաբաշխական ժամանակով՝ժ.08:00-ից---12:00-ը 30.03.2017թ - օպերատիվ ժամանակով՝ ժ. 08:00-ից -14:00-ը 30.03.2017թ.						
21.10 08:00	**21.10 08:00**	**Ղեկավար կազմի ազդարարում, հավաք և**	2022թ. Հոկտեմբերի 21-ին ժամը 07:55-ին	Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը	ՈՒսումնավարժության ղեկավարը մարզային	Միջնորդները ստուգում են ՄՓՎ

09:30	09:30	**խնդրադրում :**	Սյունիքի մարզի տարածքում, Սիսիան քաղաքից 25 կմ հյուսիս-արևելք, 10 կմ խորության վրա տեղի է ունեցել 5,5 մագնիտուդով (ըստ Ռիխտերի) երկրաշարժ: Սիսիանում և հարակից համայնքներում ինտենսիվությունը ըստ MSK-64 սանդղակի կազմել է 6-7 բալ: Նախնական տվյալներով Սիսիան քաղաքում կան շենք-շինությունների ավերածություններ, ստեղծվել է ծանր ինժեներական, բժշկական և հրդեհային իրավիճակ: Քաղաքը զրկվել է էներգոմատակարարումից և գազամատակարարումից: Վնասվել և երթևեկության համար դարձել է ոչ պիտանի Որոտան գետի վրա կառուցված կենտրոնական կամուրջը: Չի գործում բջջային կապը, հաղորդակցման ուղիները և կոմունիկացիոն համակարգերը: Սիսիան քաղաքում փլուզվել են շենք շինություններ, բնակչության շրջանում կան զոհեր, վիրավորներ և անհայտ կորածներ:	իրականացնում է Սյունիքի մարզի ղեկավար կազմի ազդարարումը: ՈՒսումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան, ներկայանում են Սյունիքի մարզպետարանի վարչական շենք ՀՀ Սյունիքի մարզպետի մոտ խորհրդակցության: Սյունիքի ՄՓՎ պետը մարզպետին ներկայացնում է ստեղծված իրավիճակը և զեկուցում խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին: Պարզաբանում են ստեղծված իրավիճակը և յուրաքանչյուրի խնդիրներն ու անելիքները: Բոլոր մակարդակներում պատրաստության են բերվում կառավարման կետերը, կապի և ազդարարման միջոցները:	փրկարարական վարչության պետին տալիս է կարգադրություն ուսումնավարժության մասնակից-ների ազդարարում և հավաք իրականացնելու վերաբերյալ: ՇՈՒՆ ղեկավարման շտաբի միջոցով հետևում է ազդարարման և հավաքի ընթացքին: Ընդունում է ՄՓՎ պետի զեկույցը խորհրդակցությանը պատրաստ լինելու վերաբերյալ: Հրավիրում է ԱԻ հանձնաժողովի արտահերթ նիստ: Տալիս է բնակչության պաշտպանության համակարգը պատրաստության բերման հրաման: Խորհրդակցության ընթացքում ծանոթացնում է իրավիճակին :	ՃԿԿ կրտսեր հրահանգիչի գործողություն ները ազդանշան ստանալու ընթացքում : Առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ազդարարման կազմակերպման և սահմանված ժամկետում իրականացման վրա : Տեղերում միջնորդները վերահսկում են հավաքի ազդանշանի ժամանակին ընդունումն ու հավաքին ներկայանալու սահմանված ժամկետները : Ներկա գտնվելով մարզպետի մոտ կայացած խորհրդակցությանը, օգնում են մասնակիցներին խնդիրների պարզաբանման ու յուրացման հարցերում :

			ՈՒԺեղ երկրաշարժի հետևանքով փլվել և վնասվել են Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Զ. Անդրանիկի թաղամասերը/ բնակիչների թիվը 1655 / : Ստեղծվել է բարդ սանիտարական իրավիճակ, կան խցանված ճանապարհներ, առկա են հրդեհների օջախներ, մասնակի շարքից դուրս են եկել կոմունալ-էներգետիկ, կապի և հեռահաղորդակցության ցանցերը:			
21.10 09:30 17:00	**21.10 09:30 11: 00**	<< ՈՒԺեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան>>-ը գործողության մեջ դնելը: Հետախուզության իրականացում :	Առավել վտանգավոր է իրավիճակը Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Զ. Անդրանիկի թաղամասերի բնակիչների համար : Ստեղծվել է բարդ սանիտարական իրավիճակ, կան խցանված ճանապարհներ, առկա են հրդեհների օջախներ, մասնակի շարքից դուրս են եկել կոմունալ-էներգետիկ, կապի և հեռահաղորդակցության ցանցերը:	Գործողության մեջ է դրվում << ՈՒԺեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան >>-ը: Պարզաբանում են ստեղծված ընդհանուր իրավիճակը՝ յուրաքանչյուրի խնդիրներն ու անելիքները: Թաղամասերից ճշտվում և ճշգրտվում են ավերված և վնասված շենքերի ավերածության աստիճանները, փլատակների տակ մնացած բնակիչների	Հրաման է տալիս << ՈՒԺեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան >>-ը գործողության մեջ դնելու մասին : Հրաման է տալիս Սիսիան համայնքի ղեկավարին և մարզային ՔՊ ծառայությունների պետերին Սիսիան քաղաքի Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Զ. Անդրանիկի թաղամասերում հետախուզություն իրականացնելու վերաբերյալ :	Ստուգում են պլանների առկայությունը, ամբողջականությունը և կիրառելիությունը: Ճշգրտվում է պլանների գործողության մեջ դնելու և նրանցում նշված միջոցառումների իրականացման ընթացքը :

				իրագործումը հնարավորություն է տալիս անհապաղ կազմակերպել վտանգավոր գոտուց բնակչության տարահանման կազմակերպումը, քաղաքացիներին պատկանող նյութական արժեքների գույքի պաշտպանությունը և պահպանությունը: Իրականացնում են հետախուզություն՝ իրական վիճակը գնահատելու և անհրաժեշտ փրկարարական և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար: Զեկուցում են հետախուզության արդյունքների մասին, որի հիման վրա ՄՓՎ պետը ներկայացնում է առաջարկություն որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու վերաբերյալ: Որոշում են Սիսիան քաղաքի վտանգավոր թաղամասերից բնակչության տարահանման		

				երթուղիները և վայրը:		
	Ժ. 10:00 -ից 10:50	Տրվում է միջանկյալներ թիվ 1- 3 :	Իրավիճակը ըստ թիվ 1-3 միջանկյալների:	Իրականացնում են միջոցառումներ համաձայն տրված միջանկյալների:		
	21.10 11:30 12:00	**Առաջին փուլի ամփոփում**		Ներկայանում են խորհրդակցության և զեկուցում առաջին փուլում կատարված աշխատանքների մասին :	ՈՒՆկնդրում և քննարկում է մասնակիցների զեկույցները առաջին փուլում կատարած աշխատանքների վերաբեր-յալ, տալիս գնահատական կատարված աշխատանքների մասին :	Միջնորդները ներկայանում են խորհրդակցությանը, մասնակցում ունկնդրմանը և հարցերի քննարկմանը:
II ՓՈՒԼ ---- << Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում և որոնողափրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում >> : **Փուլի տևողությունը**- աստղաբաշխական ժամանակով – ժ.13:00-ից-17:00-ը 30.03. 2017թ - օպերատիվ ժամանակով –ժ.11:00-ից 30.03.2016թ մինչև փրկարարական աշխատանքների ավարտ						
21.10 13:00 16:30	**21.10 13:00 13:30**	Բնակչության տարահանման կազմակերպում:	Երկրաշարժի հետևանքով ամբողջովին փլվել են Ֆիզկուլտուրնիկներ N2 , N 6, Որոտան N3 , N5 և Զ. Անդրանիկի N 1 , N 5 շենքերը, որտեղ բնակվում է 1010 մարդ :	Մշակում են << Սյունիքի մարզպետի որոշման նախագիծ՝ վնասված շենքերից բնակչության տարահանման մասին : Մարզի ԱԻ և տարահանման հանձնաժողովները իրականացնում են համապատասխան պլաններով նախատեսված տարահանման ենթակա և տարահանվող բնակչության ընդունման հավաքակայանների ծավալումը, ճշգրտում տարահանման ենթակա բնակչության խնդիրներն ու հաշվարկները :	Տալիս է կարգադրություն տարահանման միջոցառումները սկսելու մասին և միջնորդական կազմի միջոցով վերահսկում կատարման ընթացքը: Ղեկավարման շտաբի և միջնորդների միջոցով իրականացնում է բնակչության տարահանման խնդիրների գործընթացը:	Միջնորդները հետևում են ԱԻ և տարահանման հանձնաժողովն երի կողմից կողմից հավաքակայանների ծավալման ու միջոցառման կազմակերպման ու անցկացման գործընթացին : Առանձնահատուկ ուշադրություն են դարձնում
21.10 11:00 մինչև	**21.10 13:30 14:30**	Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում	Փլուզված Ֆիզկուլտուրնիկների N 2 , N 6, Որոտանի N3 ,	Առաջարկություններ են ներկայացնում Ֆիզկուլտուրնիկներ N 2 ,	Հրաման է տալիս որոնողափրկարարական աշխատանքների	Հետևում են ուսու-ցանվողների գոր-ծողություններին և

փրկարարական աշխատանքների ավարտ		Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Զ. Անդրանիկի թաղամասերում :	N5 և Զ. Անդրանիկի N 1 , N 5 շենքերում, 151 մարդ մնացել են փլատակների տակ , որոնց մեջ կան երեխաներ, ծերեր, կանայք և հաշմանդամներ, իսկ 415 մարդ ստացել են բազմաթիվ կոտրվածքներ և վնասվածքներ:	N 6, Որոտան N3 , N5 և Զ. Անդրանիկի N 1 , N 5 շենքերում որոնողափրկարարա կան աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ , ինչպես նաև տեղադրել ոստիկանական հսկիչ կետեր և զգուշացնող ազդանշաններ, կարգավորել խցանված մեքենաների երթևեկությունը, սահմանափակել քաղաքացիների տեղաշարժը վտանգավոր գոտում, աղետի գոտի թույլատրել մուտք գործել միայն հատուկ անցագրերով մեքենաներին՝ չխանգարելու փրկարարների ու հատուկ ինժեներական տեխնիկայի աշխատանքներին:	կազմակերպման վերաբերյալ :	օգնում խնդիր-ների յուրացման և պար-զաբանման հարցե-րում: Մասնակիցներին ցուցաբերում են մեթոդական օգնություն :
21.10 17:00-ից մինչև ավարտ	**21.10 14:30 17:00**	Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում:	Հզոր ցնցումներից փլվել է կենտրոնական կամուրջը, ինչի հետևանքով խափանվել է երթևեկությունը քաղաքի տվյալ հատվածում: Կամրջի երկաթբետոնյա կոնստրուկցիաների մնացորդները խանգարում են Որոտան գետի ազատ հոսքը, ինչի	Առաջարկություններ են ներկայացնում համապատասխան ուժերի ներգրավվմամբ և մասնակցությամբ / <<Հիդրո >> ՍՊԸ, <<Նոր բակ նորոգշին>> ԲԲԸ / իրականացնել ինժեներական և վթարավերականգնողական աշխատանքներ, ինժեներական տեխնիկայի	Հրաման է տալիս անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման վերաբերյալ և միջնորդական կազմի միջոցով վերահսկում է աշխատանքների կատարման ընթացքը:	Մասնակիցներին ցուցաբերում են մեթոդական օգնություն :

			հետևանքով ջրի մակարդակը սկսել է բարձրանալ: Ճանապարհներին առաջացել են բազմաթիվ բեռնատար և մարդատար ավտոմեքենաների խցանումներ: Ջրամբարի պատվարի ճեղքվածքը հետցնցման հետևանքով կարող է մեծանալ, ինչի հետևանքով ջրածածկման վտանգ է սպառնում Սիսիան քաղաքին, Բալաք, Շաղատ, Շամբ, Որոտան և ՈՒյծ համայնքներին :	օգնությամբ հեռացնել փլված կամրջի երկաթբետոնյա կոնստրուկցիաների մնացորդները, մաքրել գետի հունը տվյալ հատվածում՝ ապահովելով ջրի ազատ ընթացքը և սկսել կամրջի վերանորոգման աշխատանքները : Սպանդարյան ջրամբարի պատվարի վթարը վերացնելու նպատակով որոշում են ջուրը ջրամբարից բաց թողնել վթարային կարգավորիչ պահեստային ելքով, լայնացնել գետի հունը ՈՒյծ համայնքի տարածքում, որը հանդիսանում է կիրճի ամենանեղ հատվածը՝ ջրի ազատ ընթացքը ապահովելու նպատակով :		
	Ժ. 14:10-ից 16:00	Տրվում է միջանկյալներ թիվ 4 - 11:	Իրավիճակը ըստ թիվ 4 - 11 միջանկյալների:	Իրականացնում են միջոցառումներ համաձայն տրված միջանկյալների:		
	21.10 17:00 18:00	II փուլի ամփոփում		Ներկայանում են խորհրդակցության և զեկուցում երկրորդ փուլում կատարված աշխատանքների մասին :	ՈՒնկնդրում և քննարկում է մասնակիցների զեկույցները երկրորդ փուլում կատարած աշխատանքների վերաբեր-յալ, տալիս գնահատական կատարված աշխատանքների մասին , ամփոփում ուսումնավարժության	Միջնորդները ներկայանում են խորհրդակցու թյանը, մասնակցում ունկնդրմանը և ներկայացնում իրենց նկատառումները և առաջարկու թյունները :

					արդյունքները, մատնանշում ուժեղ և թույլ կողմերը :	
	Ժ. 18:00	Ուսումնավարժության ավարտ			ՈՒսումնավարժության ղեկավարը հայտարարում է ուսումնավարժության ավարտ :	

10/14/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Է.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հավելված N 7
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ հոկտեմբերի 13-ի
N -Ա որոշման
409

ՊԼԱՆ
ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Միջանկյալի տրման ժամը	Միջանկյալների բովանդակությունը	Ով է հանձնում	Ում է հանձնում
I ՓՈՒԼ – « Սիսիան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում իրավիճակի գնահատում » : **Փուլի տևողությունը** -աստղաբաշխական ժամանակով՝ժ.08:00-ից—12:00-ը 21.10.2022թ - օպերատիվ ժամանակով՝ ժ. 08:00-ից -14:00-ը 21.10.2022թ.			
ժ. 10:00	**Միջանկյալ թիվ 1** Փլուզվել է թիվ 2 հիմնական դպրոցի գլխավոր մասնաշենքը : Կան 7 տուժած:	ՈՒսումնավարժության ղեկավարը	Տրվում է բոլորին
ժ.10:30	**Միջանկյալ թիվ 2** Սիսական 5 շենքի տարածքում առկա է երկաթբետոնյա կառուցատարերի փլուզման նոր վտանգ:	ՈՒսումնավարժության ղեկավարը	Սյունիքի ՄՓՎ , մարզային ՔՊ հասարակական կարգի պահպանման ծառայություն
ժ.10:50	**Միջանկյալ թիվ 3** Բետոնյա փլվածքներից փակվել է << Մշակույթի տան >> մուտքը: Կան 4 տուժած :	ՈՒսումնավարժության ղեկավարը	Սյունիքի ՄՓՎ , մարզային ՔՊ հասարակական կարգի պահպանման ծառայություն
II Փ Ո Ւ Լ – << Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում և որոնողափրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում >> : **Փուլի տևողությունը** - աստղաբաշխական ժամանակով – ժ.13:00-ից-17:00-ը 21.10.2022թ - օպերատիվ ժամանակով –ժ.11:00-ից 21.10.2022թ մինչև փրկարարական աշխատանքների ավարտ			
ժ. 14:10	**Միջանկյալ թիվ 4** Տարահանվող բնակչության համար անհրաժեշտ տրանսպորտի վառելիքասուկային նյութերի հաշվարկում :	ՈՒսումնավարժության ղեկավարը	մարզային ՔՊ նյութատեխնիկական մատակարարման ծառայություն.
ժ. 14:30	**Միջանկյալ թիվ 5** Բնակչության տարահանումն իրականացնող ավտոբուսներից երկուսը խափանվել են:	ՈՒսումնավարժության ղեկավարը	մարզային ՔՊ տրանսպորտի ծառայություն.
ժ. 14:40	**Միջանկյալ թիվ 6** Առավել ծանր վիճակում գտնվող թվով 25 տուժածների անհրաժեշտ է տեղափոխել ք. Երևան :	ՈՒսումնավարժության ղեկավարը	մարզային ՔՊ բժշկական ծառայություն, մարզային ՔՊ տրանսպորտի ծառայություն.

ժ.14:50	**Միջանկյալ թիվ 7** Որոտան գետի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրածածկման գոտում են հայտնվել քաղաքի ցածրադիր թաղամասերը և ափամերձ տարածքները :	ՈՒԽումնավարժության ղեկավարը	Սիսիանի քաղաքապետին
ժ. 15:00	**Միջանկյալ թիվ 8** Սահմանափակել բնակչության շարժը դեպի վտանգավոր տարածքներ :	ՈՒԽումնավարժության ղեկավարը	մարզային ՔՊ հասարակական կարգի պահպանման ծառայություն
ժ. 15:15	**Միջանկյալ թիվ 9** Սիսիական, Որոտան, Երիտասարդական և Ֆիզկուլտուրնիկներ թաղամասերում ընդհատվել է հաղորդակցությունը քաղաքի մյուս թաղամասերի հետ:	ՈՒԽումնավարժության ղեկավարը	մարզային ՔՊ կապի և ազդարարման ծառայություն
ժ. 15:40	**Միջանկյալ թիվ 10** Կատարել զոհվածների և տուժածների հաշվառում, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ դիակապտության և կողոպուտի դեպքերը բացառելու նպատակով:	ՈՒԽումնավարժության ղեկավարը	մարզային ՔՊ կոմունալ-տեխնիկական ծառայություն, մարզային ՔՊ հասարակական կարգի պահպանման ծառայություն
ժ. 16:00	**Միջանկյալ թիվ 11** Սայաթ Նովա, Իսրայել Օրի, Այգեստան և Գայի թաղամասերում ընդհատվել է էներգոմատակարարումը :	ՈՒԽումնավարժության ղեկավարը	մարզային ՔՊ էներգետիկայի ծառայություն

10/14/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Է.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**